

## Վրաստանի առաջին նախագահի այրին պնդում է, որ Myvideo.ge կայքը կիրառում է ցենզուրա

Ապրիլ 11, 2011

Վրաստանի առաջին նախագահի այրին պնդում է, որ Myvideo.ge կայքը կիրառում է ցենզուրա

 [manana\\_archvadze.jpg](#) [1]

Վրաստանի առաջին նախագահի այրի Մանանա Արչվաձե-Գամսախուրդիան մեղադրում է վրացական [www.myvideo.ge](http://www.myvideo.ge) [2] պորտալին տեսաքննադատություն կիրառելու մեջ: Ենթադրվում է, որ կայքի ադմինիստրացիան հեռացրել է մարտի 30-ին կայք վերբեռնված տեսանյութը: Այն նվիրված էր Վրաստանում 20 տարի առաջ տեղի ունեցած իրադարձություններին:

YouTube-ում տեղադրված իր ուղերձում Մանանա Արչվաձե-Գամսախուրդիան պնդում է, որ տեսանյութը, որն արգելափակել է վրացական կայքի ադմինիստրացիան, հատուկ պատրաստված էր Վրաստանի անկախության 20-ամյակի և Վրաստանի առաջին նախագահի ծննդյան տարեդարձի առթիվ:

Այդ տեսանյութում Մանանա Արչվաձեն պատմում է անկախությանը նախորդող գործընթացների, 1991 թ-ի մարտի 31-ի հանրաքվեի հետևանքների և Զվիադ Գամսախուրդիայի կենսագրության մասին:

Գամսախուրդիայի այրին կասկածներ ունի, որ կայքի ադմինիստրացիան ղեկավարվում է իշխանությունների կողմից:

«Տեսանյութը արգելափակվել է այն վերբեռնելուց 24 ժամվա ընթացքում, չնայած, որ այն ոչ մի վիրավորական կամ չթուլատրված նյութ չէր պարունակում», - ասել է Մանանա Արչվաձեն՝ պահանջելով տեսանյութի վերականգնում և գրավոր պատասխան կայքի ադմինիստրացիայից:

[Myvideo.ge](#) [2] կայքի սեփականատեր ITDC ընկերությունը հայտնում է, որ նրանք չեն հասկանում Մանանա Արչվաձեի բողոքի հիմքերը:

«Թող կոնկրետ ասեն, թե որ տեսանյութի մասին է խոսքը և պաշտոնական դիմում ներկայացնեն, և մենք նրանց պաշտոնական պատասխան կտանք», - ասել է ընկերության վաճառքի մենեջեր Թինաթին Մոնավարդիշվիլին Media.ge կայքին:

**Աղբյուր:** [Media.ge](#) [3]

### Թեմատիկ նյութեր

[Գրիգոր Ամալյան. «Սարք ունենալ-չունենալը դիտք որպես սեփական հայեցողություն. ոչ թե իրավունքի սահմանափակում»](#) [4]

[2012 թվականի ընթացքում LՀԱ-ի իրականացրած հետազոտությունները](#) [5]

[LՀԱ-ի ծրագիրը One World Social Innovation միջազգային մրցույթի լավագույնների շարքում](#) [6]

[Ditaket.am: Հաշմանդամ աղքատ երազանքն իրականություն դարձավ](#) [7]

[Irazek.am ընտրական ուղեցույցում քաղաքացիների հաղորդագրությունների վերլուծություն](#) [8]

**Source URL:** <http://www.jnews.am/node/1035>

**Links:**

- [1] [http://www.jnews.am/files/manana\\_archvadze.jpg](http://www.jnews.am/files/manana_archvadze.jpg)
- [2] <http://www.myvideo.ge/>
- [3] <http://www.media.ge/en/node/40809>
- [4] <http://www.jnews.am/interview-with-grigor-amalyan>
- [5] <http://www.jnews.am/jff-studies-2012>
- [6] <http://www.jnews.am/jff-project-on-one-world-social-innovation-award>
- [7] <http://www.jnews.am/mane-asryan>
- [8] <http://www.jnews.am/research-result-of-voters-complains-on-irazek>